

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» -----2022թ.

N----Ա

### ՈՐՈՇՈՒՄ

**«ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ԳԾՈՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՎՃԱՐՈՒՄ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԱՐԿՎՈՂ ՏՈԿՈՍՆԵՐԻ՝ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 67-րդ հոդվածով, ինչպես նաև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի հ.69-Ա որոշումը, ինչպես նաև՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի 13.04.2022թ. հ.Ն/1277-2022 զեկուցագիրը՝

#### **Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. «Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2020 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով զուտ շահույթից Երևանի բյուջե վճարման ենթակա 11969.4 հազ.դրամ (տասնմեկ միլիոն իննը հարյուր վաթսուինը հազար չորս հարյուր դրամ) շահութաբաժնի գծով պարտավորության մայր գումարի, ինչպես նաև՝ սահմանված ժամկետում վճարում չկատարելու համար հաշվարկվող տոկոսների վճարումից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐԱԶՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ԳԾՈՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՎՃԱՐՈՒՄ ԶԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԱՐԿՎՈՂ ՏՈԿՈՍՆԵՐԻ՝ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի մայիսի 25-ի հ.386-Ա և Երևանի քաղաքապետի 2021 թվականի հունիսի 9-ի հ.1873-Ա որոշումների համաձայն՝ «Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2020 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած 44699.0 հազ.դրամ զուտ շահույթից 2021 թվականին Երևանի բյուջե պետք է վճարվեր 17969.4 հազ.դրամ շահութաբաժին, սակայն փաստացի կատարվել է 6000.0 հազ. դրամի վճարում:

Ընկերության կողմից շահութաբաժնի գումարների սահմանված ժամկետներում չվճարելը պայմանավորված է ֆինանսական ցուցանիշներով, մասնավորապես՝ ազատ դրամական միջոցների խիստ անբավարարությամբ:

Ընկերության ֆինանսական ցուցանիշների վատթարացումը պայմանավորված է նրանով, որ 2021 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշվով նախատեսված 150.0 մլն. դրամ նախագծային աշխատանքների դիմաց փաստացի կատարվել է 63.8 մլն. դրամի, կամ 86.2 մլն. դրամով՝ 57.5%-ով պակաս, որի արդյունքում ստացվել է 31.7 մլն. դրամի վնաս:

Երևան քաղաքապետարանի պատվերով կատարվել են ընդամենը 8.6 մլն. դրամի աշխատանքներ, քանի որ Երևան քաղաքի գլխավոր հատակագծի ճշգրտման նախագծի մշակման գծով օրենսդրությամբ սահմանված կարգով գնման գործընթացը չի իրականացվել:

Ընկերությունը խնդիր ունի նաև դեբիտորական պարտքերի հավաքագրման մասով՝ 01.01.2022թ. դրությամբ դեբիտորական պարտքերը կազմել են 30.6 մլն. դրամ (գոյացել են հիմնականում 2005-2020թթ.), որից ժամկետանց պարտքերը՝ 25.9 մլն. դրամ, կամ ընթացիկ պարտքերը կազմել են 4.6 մլն. դրամ:

Ներկայումս դրամական միջոցների անբավարարության հետևանքով Ընկերությունը հնարավորություն չունի վճարել շահութաբաժնի գծով պարտավորությունը, և Երևանի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի հ.69-Ա որոշմամբ հաստատված՝ «Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինները սահմանված ժամկետում չվճարելու դեպքում տոկոսների հաշվարկման, վճարման և պարտավորությունների գանձման» կարգի դրույթների համաձայն՝ սահմանված ժամկետում շահութաբաժինների չվճարելու արդյունքում հաշվարկվում են տոկոսներ ուշացրած օրերի համար՝ այսպես 12.04.2022թ. դրությամբ հաշվարկված տոկոսները կազմում են 763.4 հազ. դրամ:

Առաջնորդվելով Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի հ.69-Ա որոշման դրույթներով՝ Ընկերությունն առողջացնելու նպատակով, առաջարկվում է ազատել Ընկերությանը շահութաբաժնի, ինչպես նաև՝ հաշվարկվող տոկոսների վճարումից:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ԳԾՈՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՎՃԱՐՈՒՄ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԱՐԿՎՈՂ ՏՈԿՈՍՆԵՐԻ՝ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2020 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով հաշվարկված շահութաբաժնի գծով պարտավորության և սահմանված ժամկետում վճարում չկատարելու համար հաշվարկվող տոկոսների՝ Երևան քաղաքի բյուջե վճարումից ազատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**ՀՐԱԶՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**



## ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ԳԾՈՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՎՃԱՐՈՒՄ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԱՐԿՎՈՂ ՏՈԿՈՍՆԵՐԻ՝ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2020 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով հաշվարկված շահութաբաժնի գծով պարտավորության և սահմանված ժամկետում վճարում չկատարելու համար հաշվարկվող տոկոսների՝ Երևան քաղաքի բյուջե վճարումից ազատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի 2022թ. բյուջեի փոփոխությունների անհրաժեշտություն չի առաջանում:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

